

ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ (ՕՎԵՐԴՐԱՖՏԻ) ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Հավելված 3

«Հավելված 17»

Վարկագրի լոգո (սեղմել և բեռնել)

Գործողության սկիզբ 08/04/2019

Ավարտ 31/05/2019

! Հարգելի վարկառու, բոլոր վարկատուները պարտավոր են տրամադրել նմանատիպ թերթիկ, որում ամփոփված են սպառողական վարկի էական պայմանները: Վարկ ստանալու համար դիմելիս վարկատուն Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, որում կներկայացվեն Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները, որոնք չպետք է լինեն ավելի խիստ, քան սույն ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿԻՆՄ նշվածները:

2. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Վարկի անվանում	Չվերականգնող քարտային վարկային գիծ	
2.2 Վարկի գումար	առավ. 5 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթ	
2.3 Վարկի ժամկետ	առավելագույնը 36	ամիս
2.4 Տարեկան անվանական % (ՏԱՏ)	ԱՄՆ դոլար 11.9%, Եվրո 10.9%	

Այն փոկոսադրույքն է, որի հիման վրա հաշվարկվում են վարկի փոկոսագումարները:

2.5 Տարեկան փաստացի % (ՏՓՏ)	12.57% ԱՄՆ դոլար, 11.46% Եվրո	
-----------------------------	-------------------------------	--

Այն փոկոսադրույքն է, որում, բացի վարկի փոկոսագումարներից, հաշվի են առնված վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները: Վարկային պայմանագրի կնքման դեպքում Ձեր վարկի ՏՓՏ-ն չի կարող լինել ավելին, քան այս թերթիկում ներկայացված ՏՓՏ-ն:

3. ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

<input checked="" type="checkbox"/> 3.1 Գրավ	չի պահանջվում
--	---------------

<input checked="" type="checkbox"/> 3.2 Երաշխավորություն	առավելագույնը 2 անձի երաշխավորություն
--	---------------------------------------

4. ՎԱՐԿԻ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Վարկ/գրավ հարաբերակցություն	չի պահանջվում	%
4.2 Արտոնյալ ժամկետ (Գրեյս պերիոդ)	չի սահմանվում	

4.3 Հաշվի նվազագույն շարժ և վճարման կարգ	յուր. ամիս նվազեցման ենթակա գումարի և նախորդ ամսվա վերջի դրությամբ կուտակված %-րի չափով	
4.4 Չօգտագործված մասի դիմաց հաշվարկվող %	չի սահմանվում	%

5. ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ

5.1 Վարկային հայտի ուսումնասիրության	չի պահանջվում
5.2 Վարկի սպասարկման	չի պահանջվում
5.3 Գրավի գնահատման	չի պահանջվում
5.4 Նոտարական վավերացման	չի պահանջվում

5.5 Գրավի ապահովագրության	չի պահանջվում
5.6 Քարտի սպասարկման	3,600 ՀՀ դրամ տարեկան
5.7 Կանխիկացման (վարկագրի բանկոմատներից կանխիկացման)	1%
5.8 Այլ միջնորդավճարներ	չի պահանջվում

5.9 Ընդամենը այլ վճարներ

առավելագույնը 68,000 ՀՀ դրամ

Բոլոր այլ վճարների ընդհանուր գումար

6. ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ

! Դուք իրավունք ունեք վարկադրուի հետ հաղորդակցվել Ձեր նախընտրած եղանակով՝ առձեռն, էլեկտրոնային կամ փոստային կապի միջոցով (օրինակ՝ Դուք կարող եք Ձեր քաղվածքը ստանալ Ձեր էլեկտրոնային փոստի միջոցով):

Դուք իրավունք ունեք ցանկացած չափով ժամկետից շուտ մարել վարկը՝ առանց փոյժեր կամ փուլանքներ վճարելու:

7. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՐ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՏՈՒՅԺ/ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

7.1 Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում

7.4 Ձեր գրավի առարկայի վրա օրենքով սահմանված կարգով կարող է կարող է **քննագանձում** տարածվել:

7.2 Տոկոսագումարները չվճարելու դեպքում

7.5 Այն դեպքում, երբ գրավի իրացումից հնարավոր չէ բավարար գումար ստանալ, ապա Ձեր այլ անձնական գույքը կարող է օգտագործվել վարկի մարման համար:

7.3 Այլ վճարներ

7.6 Ձեր մասին տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով կարող է գրանցվել **Վարկային բյուրոյում**: Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

8. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

-
-
-
-

9. ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏ

Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետ օր

Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման մասին տեղեկացնելու ժամկետ օր

Վարկը տրամադրելու ժամկետ օր (Պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո):

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԲ ՀԱՆԴԵՍ ԵՔ ԳԱԼԻՍ ՈՐՊԵՍ ԵՐԱՇԽԱՎՈՐ, ԱՊԱ՝

ԴՈՒՔ ԵՎՍ ԿՐՈՒՄ ԵՔ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ,

այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա վարկի չմարված մասի պարտավորությունները տարածվում են Ձեզ վրա:

ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՍՏԱՆԱԼ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒՑ ՎԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

այսինքն՝ Դուք կարող եք վարկառուից պահանջել հատուցել վարկատուին վճարած գումարի տոկոսներն ու վարկառուի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ կրած այլ վնասները:

ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՁԵՐ ՆԱԽԱՋԳՈՒՇԱՑՆԵԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա Դուք պարտավոր եք վարկատուի կողմից այդ մասին նախազգուշացվելուց հետո երաշխավորության պայմանագրով սահմանված ժամկետում մարել վարկի չմարված պարտավորությունը:

ՎԱՐՈՂ ԵՔ ՀԱՅՏՆՎԵԼ «ՎԱՏ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱՎՈՒՄ»

այսինքն՝ վարկառուի կողմից վարկի չմարման դեպքում Դուք կարող եք գրանցվել Վարկային բյուրոյում, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

ԻՆՉ Է ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

Վարկային պատմությունը Ձեր ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, որը հավաքվում, կուտակվում և պարբերաբար նորացվում է ինչպես Ձեզ վարկ տրամադրած առանձին վարկատուների, այնպես էլ Վարկային բյուրոյի կողմից:

Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը ԱՔՈԱ վարկային բյուրոյից՝ այցելելով Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 9-րդ հարկ:

Վարկային պատմության մասին ավելի մանրամասն կարող եք իմանալ www.acra.am կայքից: